ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎ 11 ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА
«ЕРЕВАНСКАЯ СПЕЦИАЛЬНАЯ (ВСПОМОГАТЕЛЬНАЯ) ШКОЛА № 11 ДЛЯ УМСТВЕННО ОТСТАЛЫХ ДЕТЕЙ» ГНО

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT
«SPECIAL (AUXILIARY) SCHOOL № 11 OF YEREVAN FOR MENTALLY RETARDED CHILDREN» SNCO

ՏՆՕՐԵՆ

0071, Երևան, Նուբարաշեն 6-րդ փող., 1-ին շենք, հեռ. /Тел/Tel.: +37410 47 52 40, 11hatukdproc@mail.ru
0071, Ереван, Нубарашен 6-ая ул., 1-е здание, 0071, Nubarashen 6th St.,1st building, Yerevan

№ Ե-71 « 29 » օգոստոսի 2025թ.

ԱՐՄ ՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ ՏՆՕՐԵՆ Է. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ

ԹԻՎ 11 ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՏՆՕՐԵՆ ԱՆԱՀԻՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻՑ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Մանուկյան.

«Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ի և ԱՐՄ ՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ-ի միջև 23-07-2025 թ.-ին կնքվել է ԵՄԹԵՀԴ-ԳՀԱՊՁԲ-25/04/6 ծածկագրով պայմանագիր և հետագայում՝ 12-08-2025 թ.-ին համաձայնագիր, որով ԱՐՄ ՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ-ն պարտավորվում է մատակարարել էլեկտրոնային գրատախտակներ, լազերային տպիչներ , ներքնակներ /մատրաս/: Մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 01-09-2025թ.:

ԱՐՄ ՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ-ն 27-08-2025 թ.-ին մատակարարել է վերոնշյալ ապրանքները: Տեղեկացնում եմ Ձեզ , որ ԱՐՄ ՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ-ն խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները, այն է՝ մատակարարված էլեկտրոնային գրատախտակները չեն համապատասխանում ԵՄԹԵՀԴ-ԳՀԱՊՁԲ-25/04/6 պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում նշվածին : Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ԵՄԹԵՀԴ-ԳՀԱՊՁԲ-25/04/6 ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի ա ենթակետը՝ «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծում է պայմանագիրը մասնակի:

Հավելեմ, որ եթե մինչև սույն թվականի սեպտեմբերի 8-ը ներառյալ Ձեր կողմից վճարվեն պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման գումարները, ապա ԱՐՄ ՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում <<Գնումների մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն ԱՐՄ ՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով կներկայացվեն մատակարարի բանկ՝ գումարները գանձելու նպատակով:

ՏՆՕՐԵՆ՝ _____ Ա. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

Կատարող՝ գնումների համակարգող Վ. Գասպարյան
Հեռ. 010-47-52-40